

**ՀԱՄԱԶԱՅՆԵՑՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՆՈՐ
ԻՆՍՏԻՏՈՒՏ
Բեգջանյան Կ. Ա.**

Հոդվածը վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում 2021թ. մայիսի 5-ին ընդունված համար ՀՕ-200-Ն օրենքով ներդրված համաձայնեցման վարույթի ինստիտուտին: Հոդվածում տրվում է համաձայնեցման վարույթի ընդհանուր էությունը և վեր է հանվում օրենսդրական խնդրահարույց հարցերից մեկը:

Բանալի բառեր. քրեական դատավարություն, համաձայնեցման վարույթ, պարզեցված վարույթ, քրեական դատավարության օրենսգիրք, մեղադրող, ամբաստանյալ:

Նախաբան: Համաձայնեցման վարույթը սահմանված է 2021 թվականի հունիսի 30-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված քրեական դատավարության օրենսգրքով, որը ուժի մեջ է մտնելու 2022թվականի հուլիսի 1-ից: Համաձայնեցման վարույթը որպես նոր ինստիտուտ համապատասխանեցվելով գործող իրավական նորմերին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ներդրվեց 2021թ. մայիսի 5-ին ընդունված համար ՀՕ-200-Ն օրենքով [1], որը եկավ փոխարինելու դատական քննության արագացված կարգին: Համաձայնեցման վարույթը՝ որպես ինստիտուտ (որոշ փոփոխություններով, կախված երկրի ներքին իրավակարգավորումներից և իրավընկալման մակարդակից), վաղուց գործում է մի շարք երկրներում՝ անկախ իրավական ընտանիքին պատկանելիությունից (այն գործում է ինչպես անգլոսաքսոնական իրավական ընտանիքին պատկանող մի շարք երկրներում, օրինակ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, այնպես էլ ռոմանագերմանական իրավական ընտանիքին պատկանող երկրներում, օրինակ՝ Իտալիայում):

Ինչպես ցույց է տալիս համաձայնեցման վարույթի՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառման շուրջ եռամսյա պրակտիկան, այն բավականին հաճախ կիրառվող ընթացակարգ է, որը իր կիրառելիության հաճախականությամբ չի զիջում արագացված դատաքննության կարգին:

Թեմայի արդիականությունը հիմնավորվում է նրա նոր ներդրմամբ, ինչը և փաստում է անհրաժեշտությունը՝ հնարավորինս շատ խորը մասնագիտական հետազոտական աշխատանքներ կատարելու սույն թեմային վերաբերող տարբեր առանցքային հարցերի շուրջ: ՀՀ-ում համաձայնեցման վարույթի վերջերս ներդրմամբ է պայմանավորված թեմայի շուրջ գիտական աշխատությունների պակասը, այդ իսկ պատճառով սույն հետազոտությունը գլխավորապես նվիրված է լինելու համաձայնեցման վարույթի՝ որպես նոր ինստիտուտի էության պարզաբանմանը:

Ինչպես նախաբանում արդեն նշվեց, հետազոտվող ինստիտուտը մեծ կիրառություն ունի աշխարհում: Իսպանիայի թագավորությունում, Ռուսաստանի Դաշնությունում պարզեցված ընթացակարգը ավելի բնորոշ է Հայաստանում նախկինում կիրառված արագացված ընթացակարգին և հիմնվում է ամբաստանյալի (մեղադրյալի) կողմից մեղադրանքի ընդունման վրա [2]: Իտալիայի Հանրապետությունում, ինչպես նաև Ամերիկայի Միացյալ Նահանգներում, պարզեցված ընթացակարգը իրենից ներկայացնում է մեղադրողի և ամբաստանյալի (մեղադրյալի) կողմից համաձայնության գալը պատժի (պատժատեսակի և պատժաչափի) հետ [3]:

Գիտության մեջ պարզեցված ընթացակարգի կիրառությունը միանշանակ չի ընդունվում, օրինակ՝ ռուս դատավարագետ Ս. Մոխսենան նշում է, որ արդարադատության իրականացման համար անհրաժեշտ է ցանկացած պարագայում իրականացնել բազմակողմանի քննություն, որպեսզի դատարանը իր դատավճռում հիմնվի անհերքելի փաստերի վրա, որը հնարավոր է միայն՝ հարցաքննելով վկաներին, փորձագետներին, հետազոտելով ապացույցները և այլ փաստաթղթեր:

Գ. Բադդասարյանը գտնում է, որ հայկական օրենսդրությամբ արագացված (պարզեցված) ընթացակարգի սահմանումը պայմանավորված է այնպիսի օբյեկտիվ հիմքերով, ինչպիսիք են դատավարության արդյունավետության բարձրացումը, դատարանների ծանրաբեռնվածության նվազումը, մարդու իրավունքներին ուղղված միջազգային պայմանագրերի առկայությունը [4]:

Անդրադառնալով արդեն իսկ գործող համաձայնեցման վարույթի էությանը՝ հարկ է նշել, որ Համաձայնեցման վարույթը ներառում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 9.1 բաժնի 45.1 գլխի 375.1 - 375.7-րդ հոդվածները: Գլխավորը, ինչը տարբերակում է համաձայնեցման վարույթը արագացված դատաքննության վարույթից, մեղադրողի, ամբաստանյալի և իր պաշտպանի առավել մեծ ներգրավվածությունն է պատժի որոշման հարցում և համապատասխանաբար դատարանի ավելի պասիվ մասնակցությունը:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1 հոդվածի՝ դատարանը ինչպես և արագացված կարգ կիրառելու դեպքում, այնպես էլ համաձայնեցման վարույթը կիրառում է ոչ մեծ, միջին ծանրության կամ ծանր հանցագործության մեջ մեղադրվող ամբաստանյալի միջնորդության հիման վրա, որը կարող է ներկայացվել քրեական գործը դատարան ուղարկելու պահից մինչև դատաքննության սկսվելը: Համաձայնեցման վարույթի կիրառման համար անհրաժեշտ է, որ ամբաստանյալի միջնորդությանը չառարկի ինչպես դատախազը, այնպես էլ տուժողը: Դատախազը կարող է մեղադրական եզրակացությունը հաստատելիս արտահայտած դիրքոռոշումը փոխել դատարանում: Համաձայնեցման վարույթ չի կարող կիրառվել այն դեպքում, եթե գործում ներգրավված են մի քանի ամբաստանյալներ, և նրանցից թեկուզ մեկը առարկում է համաձայնեցման վարույթ կիրառելուն:

Համաձայնեցման վարույթի կիրառման համար անհրաժեշտ է, որ ամբաստանյալը ունենա պաշտպան և միջնորդությունը ներկայացնի նրա հետ խորհրդակցելու արդյունքում:

Ուսումնասիրելով քրեական դատավարության օրենսգրքի 375.1-ին հոդվածը՝ կարող ենք տեսնել որոշ բացեր, որոնցից մեկին էլ կանդրադառնանք սույն հետազոտության շրջանակներում:

Համաձայն վերոհիշյալ հոդվածի՝ համաձայնեցման վարույթը կիրառվում է ոչ մեծ, միջին ծանրության կամ ծանր հանցագործության մեջ մեղադրվող ամբաստանյալի միջնորդության հիման վրա: 375.2-րդ հոդվածի համաձայն՝ ամբաստանյալի միջնորդությունը բավարարելու դեպքում դատարանը կողմերի բանակցությունների համար սահմանում է մեկամսյա ժամկետ, 375.3-րդ հոդվածի համաձայն՝ հատուցման ենթակա վնասի բնույթի և չափի, ամբաստանյալի նկատմամբ կիրառման ենթակա պատժի (պատժատեսակի և պատժաչափի), ներառյալ այն կրելու նպատակահարմարության հարցի շուրջ

համաձայնության չգալու պարագայում դատարանը գործի քննությունը շարունակում է ընդհանուր կարգով:

Այսպիսով, եթե նախկինում արագացված կարգ կիրառելու դեպքում օրենսդիրը սահմանում էր պատժի առավելագույն պատժաչափ, որը չէր կարող գերազանցել ընդհանուր պատժի 2/3-ը, ապա այս պարագայում օրենսդիրը գերծ է մնացել մեղադրող կողմին պատժաչափի սահմանափակումների մեջ դնելուց, ինչը, թերևս, միանշանակ ընդունել չի կարելի: Այսպես, ինչպես արդեն նշել ենք, օրենսդրությունում պարզեցված ընթացակարգերի սահմանումը այլ օբյեկտիվ պատճառների հետ մեկտեղ հետապնդում է դատաքննության հնարավորինս արագ ավարտ՝ դատարանները չծանրաբեռնելու նպատակ: Եթե նախկինում ամբաստանյալը շահագրգռված էր ներկայացնելու միջնորդություն՝ պարզեցված կարգով դատաքննություն կիրառելու համար, ունենաով երաշխիք պատժի առավելագույն պատժաչափի հետ կապված, այս պարագայում նման երաշխիքը բացակայում է: Ամբաստանյալը, միջնորդելով համաձայնեցման վարույթի կիրառումը, չունի որևէ երաշխիք, որ մեղադրողը բանակցություններում չի առաջարկի առավելագույն պատժաչափ, իսկ առավելագույն պատժաչափ առաջարկելու դեպքում ամբաստանյալը ցանկություն կհայտնի դադարեցնելու բանակցությունները: Նման պարագայում ամբաստանյալը ավելի շահագրգռված կլինի շարունակելու դատաքննությունը ընդհանուր կարգով՝ հուսալով դատարանի կողմից ստանալ ավելի մեղմ պատժաչափ: Հետևաբար այս բացի պատճառով կարող ենք գալ այն եզրահանգման, որ հնարավոր են դեպքեր, երբ համաձայնեցման վարույթը չծառայի իր նպատակին և, ընդհակառակը, ավելի երկարացնի գործի ընդհանուր կարգով քննության ժամանակահատվածը, հիշեցնենք, որ բանակցությունների համար սահմանված է առավելագույնը 1 ամիս ժամանակ:

Եզրահանգում: Ինչպես նշվում է գրականությունում, պոպուլիստական այն գաղափարը, որ «ոչինչ այնքան թանկ չի արժենում, քան էժան դատավարությունը», այժմ ոչ մի երկրում անվերապահորեն չի ընդունվում [5]: Ժամանակը, արդարացիորեն, ցույց տվեց, որ առավել ակտուալ է որոշակի խմբի գործերով օրենսդրությունում ներդնել պարզեցված համակարգ:

Իրականացված հետազոտության արդյունքները թույլ են տալիս եզրակացություն անել այն մասին, որ Համաձայնեցման վարույթը հանդիսանում է ինքնուրույն ինստիտուտ, որը կարգավորում է որոշ

տեսակի գործերով իրավահարաբերությունները, որի նպատակն է պարզեցնելու դատաքննության ընթացակարգը, թեթևացնելու դատարանների ծանրաբեռնվածությունը, և որը իր ուրույն տեղն է գրավում պարզեցված (հատուկ) ընթացակարգերի շարքում:

Համաձայնեցման վարույթի ներդրումը Հայաստանի Հանրապետությունում կարող ենք դիտել որպես մեծ քայլ առաջ, որը փորձում է ներկայումս գործող գերծանրաբեռնված դատարանների բեռը թեթևացնել, սակայն հարկ է նշել նաև, որ գործող իրավակարգավորումների վերլուծությունը թույլ է տալիս գալ եզրահանգման, որ նման կարգավորումների պարագայում հնարավոր չէ հասնել սույն ինստիտուտի առջև դրված խնդիրների ամբողջ ծավալով իրականացմանը:

ПРОИЗВОДСТВО СОГЛАСОВАНИЯ КАК НОВЫЙ УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНЫЙ ИНСТИТУТ

Бегджанян К. А.

Статья относится к институту производства согласования, внедренному в уголовно-процессуальный кодекс РА законом АЗ-200-Н от 5 мая 2021 года. В статье дается общая сущность института производства согласования и рассматривается один из проблемных законодательных вопросов.

Ключевые слова: уголовное судопроизводство, производство согласования, упрощенное производство, уголовно-процессуальный кодекс, обвинитель, подсудимый.

PROCEEDINGS OF COORDINATION AS A NEW CRIMINAL PROCEDURE INSTITUTION

Begdzhanyan K. A.

The article refers to the institute of coordination, introduced into the Criminal Procedure Code of the Republic of Armenia by Law AL-200-N of May 5, 2021. The article gives the general essence of the institute of proceedings of coordination and raises one of the problematic legislative issues.

Keywords: criminal proceedings, proceedings of coordination, simplified production, Criminal Procedure Code, the accuser, accused.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. <https://www.irtek.am/views/act.aspx?aid=154243> (15.10.2021)
2. Тейман С. Сделки о признании вины или сокращенные формы судопроизводства: по какому пути пойдет Россия.// Российская юстиция. 1998. № 11. С. 34-38.
3. Трубникова Т.В. Теоретические основы упрощенных судебных производств. Томск, изд. ТГУ. 1999. 132 с.
4. Գ. Բաղդասարյան Ատենախոսություն - Դատական քննության արագացված կարգի՝ որպես տարբերակված դատավարական ձևի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում: Երևան: 2012: 224 էջ:
5. Головки Л. В., Гуценко К. Ф. (ред.), Филимонов Б. А. Уголовный процесс западных государств. Учебное пособие для юридических вузов. - 2-е изд., доп. и испр. М.: Зерцало. 2002. 528 с.

Տեղեկություններ հեղինակի մասին

Բեգջանյան Կ. Ա. – մագիստրոս

Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարան,

«Ջեյ-Փիֆաստարանական գրասենյակ» ՍՊԸ

Էլ. փոստ՝ kbegjanyan@gmail.com

Տրվել է խմբագրություն՝ 29.10.2021

Գրախոսվել է՝ 06.01.2022